Հավելված թիվ<br>
Կապան համայնքի ավագանու<br>
2019թ. մարտի 29-ի թիվ 21-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
### (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Կապան համայնքի Կապան քաղաքի հատակագծային-տարածական կառուցվածքը կրում է մասնատված բնույթ՝ կապված տարածքի ռելեֆային բարդ պայմանների հետ: Բնակավայրի կառուցապատումը զարգացել է Ողջի, Վաչագան և Կավարտ գետերի երկայնքով՝ գծային կառուցապատման սկզբունքով:

Քաղաքում հիմնական կառուցապատումը սկսվել է 1950-ական թվականներին՝ 2-4 հարկայնությամբ տիպային շենքեր: Շենքերը կառուցվել են կրող պատերի սկզբունքով, ինչով և պայմանավորված է դրանցում պատուհանների և բացվածքների փոքր չափերը: Հիմնական շինանյութ է հանդիսացել տուֆը և բազալտը:
1970-ական թվականներին սկսվել է միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաններով տիպային բազմաբնակարան շենքերի շինարարությունը: Միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաններով կառուցման եղանակը հնարավորություն է ստեղծել իրականացնելու ավելի մեծ պատուհանների բացվածքներ: Քաղաքի տարածքում կառուցված հասարակական և վարչական շենքերի հիմնական մասը կառուցվել է նմանատիպ տեխնոլոգիայով:

1980-ականներից համայնքում երկաթբետոնե կոնստրուկցիանների գործարանի գործարկման հետ մեկտեղ սկսվեց համայնքում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաններով շենքերի կառուցումը: Նշյալ տեխնոլոգիայով կառուցված շենքերը ունեն 9-13 հարկայնություն, դրանց մի մասը կախված տեղանքի ռելեֆից կառուցվել են փոփոխական հարկայնության եղանակով՝ կրկնելով տեղանքի ռելեֆը: Հավաքովի կոնստրուկցիաները գործարանում արտաքինից երեսպատված են տուֆե սալիկներով:

Համայնքի տարածքում կառուցապատման ժամանակ օգտագործվել են հետևյալ ճարտարապետական ոճերը՝ հայկական դասական, հայկական մոդեռն, կուբիզմ և այլն:

2.2. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի լուսանկարները:

**Փոփոխական հարկայնությամբ շենքեր Ռ.Մինասյան փողոցում և Դավիթ-Բեկ թաղամասում**





## Հայկական դասական ճարտարապետական ոճի շենքեր



Կապանի համայնքապետարանի շենքը



Կապանի բժշկական կենտրոնի վարչական մասնաշենք



Կապանի նախկին երկաթուղային կայարանի շենք

## Կուբիզմ ճարտարապետական ոճի շենքեր



Սյունիքի մարզային ընդհանուր իրավասության դատարանի շենք

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Կապանի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է V դարի վերջերին: Ըստ երևույթին, այդ ժամանակ Կապանը սովորական բնակավայր էր: X դարից սկսած մատենագիրների մոտ Կապանն արդեն հիշատակվում է որպես քաղաք: Կապանը X դարի վերջում (հավանաբար 998-1001 թթ. սահմաններում) դարձել է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը: Թերևս այս փաստով է պայմանավորված տարածաշջանում մեծ քանակությամբ պատմամշակութային հուշարձանների առկայությունը:

### ՀԱԼԻՁՈՐԻ ԲԵՐԴ



Ուշ միջնադարի հայկական ճարտարապետական համալիր: Գտնվում է Կապան քաղաքից 1 կմ հարավ-արևմուտք, Ողջի գետի բարձրադիր աջ ափին: 17-րդ դարի առաջին կեսին բերդի տարածքում գործում էր կուսանոց անապատ, որը պարսպատելուց հետո ծառայում էր որպես Մելիք Փարսադանյանների տոհմական ամրոց: 1720-ական թվականներին իր անառիկ դիրքի շնորհիվ դարձել է Սյունիքի ազատագրական պայքարի կենտրոնը:
Հալիձորի բերդի մոտ Դավիթ Բեկն ու Մխիթար Սպարապետը 1725-27թթ. ջախջախել են թուրքական մեծաթիվ զորքերին: Բերդի պարիսպներն ունեն տեղանքից բխող անկանոն քառանկյան ձև: Երկու կամարակապ մուտքերը գտնվում են հարավային և հյուսիսային պարիսպների մեջ: Միակ կլոր բուրգը գտնվում է ամրոցի հարավ արևմտյան անկյունում: Բերդում կան երկու եկեղեցի, տնտեսական և բնակելի շենքերի մնացորդներ: Եկեղեցիներից մեկը կառուցված է անմշակ բազալտի խոշոր քարերով: Ունի թաղածածկ դահլիճի հորինված, բեմի երկու կողմերում ավանդատները: Եկեղեցուն հյուսիսից և հարավից կից կառուցված են երկիարկ գավիթներ:
Տեղանքի թեքությունը մեղմելու նպատակով, հյուսիսային պարսպից մինչև արևելյան պարիսպը ամրացվել է տեռասաձև պարսպատով, որի շնորհիվ եկեղեցու արևելյան բակը ընդարձակվել է:

### ՎԱՀԱՆԱՎԱՆՔ



10-11-րդ դարերում հայկական ճարտարապետական հուշարձան, վանական համալիր: Սյունիքի իշխանության, ապա թագավորության հոգևոր կենտրոններից: Գտնվում է Կապանից 3 կմ հյուսիս-արևմուտք, Ողջի գետի աջ ափի գեղատեսիլ անտառապատ լեռնալանջին: Հիմնադրվել է Սյունիքի Ջագիկ իշխանի որդի Վահանի կողմից, որի անունով էլ կոչվեց: Հուշարձանախմբի ամենահին կառույցը Վահան իշխանի կողմից 911թ. կառուցված սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Այն մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի տիպի, գլխավոր խորանով և զույգ ավանդատներով

Հետագայում Վահան իշխանի եղբորորդի Վահանը եկեղեցու արևմտյան կողմում կառուցել է կամարակապ թաղածածկ գավիթ և սյունասրահ, որը ձգվում է եկեղեցու և գավիթի հարավային երկարությամբ: Այստեղ են թաղված Սյունիքի թագավորներն ու իշխանները: 1086թ. Սյունյաց թագուհի Շահանդուխտը և նրա քույր Կատան կառուցել են վանքի հարավային մուտքը, իսկ նրա լայնաթռիչք թաղի վրա սբ Աստվածածին դամբարան եկեղեցին ու գավիթը: Վահանավանքում կան այլ շինություններ ու տնտեսական կառույցներ, աղբյուրներ, արձանագրություններ, խաչքարեր ու տապանաքարեր, որոնք թվագրում են 10-ից 11-րդ դարերով:



## ՀՈՒՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Կապան քաղաքի Կավարտ թաղամասից 4 կմ հեռավորության վրա գտնվող Բաշքենդ գյուղատեղիում է գտնվում ճարտարապետական և գեղարվեստական ինքնատիպ լուծումներով կառուցված հունական եկեղեցին: Ըստ ճակատակալ քարի շինարարական արձանագրության՝ եկեղեցին կառուցել են ազգությամբ հույն Կոնդուրով եղբայրները 1865 թ.: Գմբեթավոր շինություն է՝ կառուցված ոչ տեղական, մուգ դարչնագույն տուֆաքարի և բազալտի համադրումով: Քիվերի, պատուհանների շրջանակների և զարդագոտիների համար սպիտակադեղնավուն կրաքարի օգտագործումը հետաքրքրական գունային երանգ են հաղորդել կառույցին: Եկեղեցու արևմտյան ճակատին կից է զանգակատունը: Այստեղ է գտնվում նաև եկեղեցու շինարարի դամբարանը: 1960-ական թթ. եկեղեցու շրջակայքում փլուզումների, հանքի շահագործման ընթացքում պարբերաբար իրականացված պայթեցումների պատճառով եկեղեցին այսօր գտնվում է խիստ վթարային վիճակում:



## ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԸ

Կապան քաղաքի հյուսիսարևմտյան եզրին, Խուստուփ լեռան ստորոտին, Վաչագան գետի ափին 2001 թ. կառուցվեց քանդակագործ Գուրգ Գևորգյանի և ճարտարապետ Ռոբերտ Բալյանի՝ մարմարից և գրանիտից կերտած մեծ առաջնորդի և գաղափարախոս Գարեգին Նժդեհի հուշահամալիրը՝ Կապանի պատվավոր քաղաքացի Մկրտիչ (Սերժ) Մկրտչյանի նախաձեռնությամբ:

Գարեգին Նժդեհը մահացել է Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտում 1955 թ., և շուրջ 30 տարի թաղված է եղել բանտային գերեզմանոցում: Եվ միայն 1983 թ. օգոստոսին մի խումբ նվիրյալների ջանքերով մեծ զորավարի աճյունը տեղափոխվել է Երևան, հոկտեմբերի 7-ին որոշ մասունքներ ամփոփվել են Խուստուփի լանջի Կոզնի աղբյուրի մոտ, 1987 թ. մայիսի 8-ին մնացած աճյունը ամփոփվել է Վայոց ձորի ... (Սպիտակավոր) վանքի բակում: 2005 թ. մայիսի

26-ին մի քանի մասունքներ, այդ թվում՝ բազկոսկրը, զինվորական պատիվներով վերաթաղվել են Կապանի նշված հուշահամալիրում: Համալիրի կենտրոնում մեծ զորավարի կիսանդրին է՝ սուրն ու գիրքը ձեռքերում, կողքերին իր զինվորներին խորհրդանշող 4 արծիվներ են, բարգավաճության խորհրդանիշ ցորենի հասկը, հանուն ազգի հարատևության պայքարի կոչնակող զանգը և երկրազնդի խորհրդանիշ գունդը: Դեպի հուշարձան-կոթող այցելողին ուղեկցում են վահանակների վրա մեծատառված՝ Գարեգին Նժդեհի հայտնի աֆորիզմները:
Բարեկարգված համալիրը վերաբացվել է 2012 թ. դեկտեմբերին: Նժդեհի գլխավորած Լեռնահայաստանի հերոսամարտի հավերժական վկա Խուստուփ լեռան ստորոտը զարդարող այս հուշահամալիրը Մեծն Հայի և Համամարդու երրորդված ուխտավայրն է:



## ԵՐԻՑԱՎԱՆՔ

Վաղմիջնադարյան Երիցավանք համալիրը հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցի՝ եզակի հորինվածքով հուշարձաններից է: Գտնվում է գյուղից 3 կմ հարավարևելք, բարձր սարահարթի վրա: Ըստ XIII-XIV դդ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի, վանքը հիմնադրել է Սյունյաց մետրոպոլիտ Երիցակը V դ.: Բաղկացած է եկեղեցուց, գավթից, զանգակատնից, մատուռից, որոնք այժմ կիսավեր վիճակում են: Վանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին միանավ, թաղածածկ դահլիճ է՝ հյուսիսային և հարավային ճակատներին երեք բաց կամարաշարերով: Ունի 20 մ երկարություն և 7 մ լայնություն: Կառուցված է կիսամշակ բազալտե քարերով: Վանքը հետագայում, պաշտպանական նպատակներով, շրջափակվել է կրկնակի պարսպապատերով, որոնցից պահպանվել է միայն արևելյան պարսպապատի մի հատվածը: Մատուռի ավերակները գտնվում են համալիրի հյուսիսային կողմում: Վանքի հյուսիսարևմտյան կողմում կա քարայրների համալիր, որոնցից մեկում, ըստ ավանդության, ճգնել է Հայր Երիցակը:



## ԵՂՎԱՐԴ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Եղվարդ գյուղը գտնվում է Կապան քաղաքից հյուսիս-արևելք՝ 23 կմ հեռավորության վրա: Շրջակայքն անտառապատ է: Հնում կոչվել է Աղահորդ: Ստ. Օրբելյան «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ գյուղն հիշատակվում է Սյունիք աշխարհի Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառում:

Եղվարդ գյուղի կենտրոնում է գտնվում Ս. Աստվածածին եկեղեցին /պետ. ցուցիչ՝ 8.34.4/: Ըստ մուտքի բարավորին պահպանված արձանագրության (ՌՃԽԹ) ՝ կառուցվել է 1700թ.: Եռանավ, արևելյան կիսաշրջան խորանով, խորանի հարավային և հյուսիսային կողմերում տեղադրված մեկական ավանդատներով կառույց է: Աղոթասրահը երկու զույգ կամարակապ մույթերով բաժանվում է երեք թաղածածկ նավերի: Ունի երկթեք, կղմինդրածածկ տանիք: Արևելյան և արևմտյան պատերին ունի մեկական, իսկ հարավային պատին՝ երկու նեղ, փոքր պատուհաններ: Մուտքը հարավային ճակատից է՝ երիզված սրբատաշ քարերով կառուցված պարզ կամարով: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ կրաքարից՝ կրաշաղախով: Պատերի շարվածքում օգտագործել են նաև եկեղեցու շուրջը տարածվող գերեզմանոցի տապանաքարերի ու խաչքարերի մի մասը: Գերեզմանոցում /պետ. ցուցիչ՝ 8.34.4.1/ կան մի շարք գեղաքանդակ խաչքարեր, որսի և կենցաղային տեսարաններ պատկերող տապանաքարեր: Հարկ է նշել, որ տապանաքարերի մեծ մասը արձանագիր է: Գերեզմանոցի տարածքում է գտնվում Դավիթ Բեկի զինակից, Չավնդուրի իշխան Թորոսի տապանաքարը: Գյուղից մոտ 9կմ արևելք՝ Շուշանների դաշտում, Թորոս իշխանի հրամանատարությամբ գործող Դավիթ Բեկի ջոկատներից մեկի և Ֆաթի-Ալի խանի զորքերի միջև 1725թ. տեղի ունեցած ճակատամարտում զոհվել է նաև Թորոս իշխանը: Չավնդուր գավառակի կենտրոն Եղվարդ գյուղում էլ հողին է հանձնվել նրա մարմինը: Թորոս իշխանի՝ Եղվարդ գյուղում հուղարկավորված լինելը, առիթ հանդիսացավ, որ «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը՝2007-2011թթ. նորոգի Ս. Աստվածածին եկեղեցին ու բարեկարգի նրա շրջակայքը:



## ՇԻԿԱՀՈՂ ԳՅՈՒՂԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑԻ

Շիկահող անունը առաջին անգամ հիշատակվում է XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունում: Այն Շիկահողք տարբերակով նշված է Սյունիքի Կովսական գավառի Տաթևի հայրապետական աթոռին հարկատու գյուղերի ցուցակում, 12 միավոր հարկաչափով: Բարեխառը կլիմա, գետակներ, աղբյուրներ, անտառներ, արևկող լանջեր ունեցող այս գյուղը հայտնի է դեռ վաղ ժամանակներից: Կապանի մեզ հայտնի հնագույն բնակատեղին Շիկահողի Քըրկտոր /Քարկտուր/ հնավայրն է, որտեղից հայտնաբերված քարե կացինները հնագետ Պավել Ավետիսյանը վերագրում է Ք.ա. VII հազարամյակին, այսինքն՝ նորքարեդարյան ժամանակաշրջանին: Ղևոնդ Ալիշանի վկայությամբ, գյուղից վեր, գետակի ամենավերին մասում գոյություն է ունեցել նաև Վերին Շիկահող անունով գյուղ, որը հավանաբար զբաղեցրել է ներկայիս «Աքլորի քար» կոչվող գյուղատեղիի տարածքը:

Գյուղի կենտրոնում է գտնվում XVI դարի կառույց հանդիսացող Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցին /պետ. ցուցիչ՝ 8.72.11/: Բեմի վրա ագուցված մի վիմագրից երևում է, որ ներկա շինության տեղում եղել է XIII դարի կառույց (1215): Գյուղի տարեցները հիշում են, որ

հարավային կողմերից ձորակներով եզերված գյուղամիջյան մի բարձունքի վրա: Թեք տեղանքի պատճառով հյուսիսային պատը մխրճված է հողի մեջ: Ունի կիսաշրջան խորանին կից ուղղանկյուն ավանդատներով թաղածածկ դահլիճի հորինվածք: Թաղն ամրացված է հյուսիսից և հարավից պատերի կենտրոնական մասերում տեղադրված որմնասյուներին հենված կամարով: Մուտքը հարավային կողմից է: Աղոթասրահը լուսավորվում է արևմտյան և հարավային պատերի վրա եղած մեկական ու արևելյան պատի երեք պատուհաններով: Կառուցված է անմշակ քարերով: Եկեղեցու շուրջը, առավելապես հարավային կողմում, գերեզմանոցն է, որտեղ ամփոփված են Տեր-Մովսիսյան, Մելիք-Նուբարյան հոգևոր հայրերը: Ինչը մեկ անգամ ևս հաստատում է, որ Նուբարյանների մելիքական տոհմը ծագում է Չիկահող գյուղից, որի ներկայացուցիչներից է եղել նաև հայ մեծանուն ազգային գործիչ ու բարերար Պողոս Նուբար Փաշան:

3.2 **Կապան համայնքի հուշարձանների ցանկը**

***Կապան քաղաք***

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Ամրոց Կատարավանք | 10-18 դդ. | քաղաքից 5 կմ ամ, Ողջի գետի աջ ափին, նախկին Ջրախոր գյուղի մոտ, «Տանձու լենջ» վայրում | Հ | կիսավեր |
| Դիտակետ | 10-12 դդ. | Ողջի գետի ձախ ափին | Հ | կիսավեր |
| Շինություններ օժանդակ | 10-11 դդ. | ամրոցի տարածքի ամ և հվ-ամ կողմերում | Հ | ավերված |
| Պալատական համալիր | 10-12 դդ. | | Հ | ավերված |
| Արձան «Զանգեզուրցի աղջիկը» | 1978 թ. | ավտոկայարանամերձ հրապարակում | Հ | քանդ.՝ Ս. Բաղդասարյան |
| Արձան «Քաջարանի քանալին» | 1966 թ. | Կապան - Քաջարան մայրուղու ձախ կողմում, Ողջի գետի աջ ափին | Հ | քանդ.՝ Մ. Նուրիջանյան |
| Բնակատեղի | մ.թ.ա. 1 հզ | քաղաքից 5 կմ հս-ամ, Ողջի գետի ձախ ափին, ձորում | Հ | ավերված |
| Բնակելի թաղամաս Աչաղու «Համլետավան» | | քաղաքից 5-6 կմ հս-ամ | | նախկին գյուղը մտել է քաղաքի շրջագծի մեջ |
| Ամրոց Կկոց քար | 10 դ. | Բաղաբերդ ամրոցից աե | Հ | ավերված |
| Գյուղատեղի Աչաղու | 10-18 դդ. | թաղամասի հս կողմում, անտառապատ լեռնալանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 13-14 դդ. | | Հ | ավերված |
| Եկեղեցի | 17-18 դդ. | գերեզմանոցի տարածքում | Հ | միանավ սրահ |
| Հուշարձան ազատամարտիկ Համլետ Քոչարյանի | 1991 թ. | թաղամասի ամ եզրին | Տ | թաղամասը Համլետավան է վերանվանվել ի հիշատակ Հ. Քոչարյանի |
| Մատուռ | 17-18 դդ. | Դ. Հարությունյանի տնամերձ հողամասում | Հ | կիսավեր |
| Բնակելի թաղամաս Բաղաբուրջ | | քաղաքից հվ-ամ, բարձրադիր վայրում | | նախկին գյուղը քաղաքի շրջագծի մեջ է մտել 1958 թ. |
| Գյուղատեղի | 11-17 դդ. | թաղամասից 1.5 կմ ամ, անտառապատ վայրում | Հ | գյուղատեղի Ղուշչի «Ղուրճիկ», ավերված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | 11 դ. | | Հ | փոքր, ավերված |
| Խաչքար | 11 դ. | եկեղեցու մոտ | Հ | տեղահանված |
| Տապանաքար | 11 դ. | եկեղեցու մոտ | Հ | արձանագիր |
| Գյուղատեղի Վանք | միջնադար | թաղամասից 2 կմ հվ, անտառապատ բարձունքի վրա | Հ | տարածքի մեծ մասը մելիորացված է |
| Եկեղեցի | 17-18 դդ. | | Հ | պատերը տեղ-տեղ պահպանվել են մինչև 2.5 մ բարձրությամբ |
| Տապանաքար | 1462 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | Հ | |
| Խաչքար | 10-11 դդ. | եկեղեցու ամ պատի մոտ | Հ | վերնամասը բացակայում է |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հզ | թաղամասի տարածքում | Հ | |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 1891 թ. | թաղամասի կենտրոնում | Հ | կառուցվել է հին եկեղեցու հիմքերի վրա |
| Գերեզմանոց | 13-15 դդ., 19-20 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | ավերված |
| Տապանաքար Արղունի | 1436 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին, հորիզոնական դիրքով | Հ | հին եկեղեցին կառուցողի տապանաքարն է |
| Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում Բաղաբուրջ և Բարաբաթում գյուղերի զոհվածներին | 2001 թ. | թաղամասից 1.6 կմ հվ-ամ, անտառապատ վայրում, ճանապարհի եզրին | Տ | |
| Հուշարձան Գարեգին Նժդեհի | 2001 թ. | թաղամասից 1 կմ հվ-ամ, սարալանջին, անտառի բացատում | Հ | Գևորգ Գևորգյան |
| Հուշարձան Գարեգին Նժդեհի | 2001 թ. | թաղամասից 1.5 կմ հվ-ամ, դաշտամիջյան ճանապարհի եզրին | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1970 թ. | թաղամասի կենտրոնում | Տ | տարածքը պատնեշվել է, տեղում եղած և ավերված գերեզմանոցի տապանաքարերով |
| Բնակելի թաղամաս Բարաբաթում | | | | |
| Գերեզմանոց | 19-20 դդ. | թաղամասից 300 մ աե, «Խաչի խութ» վայրում | Տ | |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 17-18 դդ. | թաղամասի կենտրոնում | Հ | միանավ սրահ |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | ավերված |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1968 թ. | թաղամասի կենտրոնում | Տ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խաչքար Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկներին | 1994 թ. | | S | |
| Բնակելի թաղամաս Բեխ | | քաղաքից հս-ամ, Խուստուփ լեռան լանջին | | նախկին գյուղը քաղաքի շրջագծի մեջ է մտել 1963 թ. |
| Ամրոց Հալիձոր (Հալիձորի բերդ) | 10-18 դդ. | Ողջի գետի բարձրադիր աջ ափին, ՀԷԿ-ի մոտ | < | կառուցվել է որպես կուսանոց անապատ. բերդի դիմաց եղել են Բեխ գյուղի Մելիք-Փարսադանյանների պղնձահանքն ու պղնձաձուլարանը |
| Դամբարան | 17 դ. | ամրոցի հս կողմում | < | քառամույթ, գմբեթավոր |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 17 դ. | | < | 1723 թ. վերակառուցվել է Դավիթ Բեկի կողմից |
| Խաչքար հայր Վարդանի | 982 թ. | ամրոցի տարածքում | < | |
| Շինություններ բնակելի | 17 դ. | Սբ. Աստվածածին եկեղեցուն կից են հվ-ից և հս-ից | < | երկհարկ |
| Սեղանատուն | 17 դ. | ամրոցի հս կողմում | < | |
| Գյուղատեղի Հալիձոր | միջնադար | Հալիձորի բերդի հվ-աե կողմում | < | ավերված |
| Գերեզմանոց | 10-18 դդ. | գյուղատեղիի եկեղեցու մոտ | < | |
| Եկեղեցի | 17 դ. | գյուղատեղիում, Հալիձորի բերդից մոտ 25 մ աե | < | միանավ սրահ |
| Խաչքար | 14-15 դդ. | ագուցված է եկեղեցու աե պատին | < | |
| Շինություն տնտեսական | 19 դ. | գյուղատեղիում | < | կանգուն է |
| Եկեղեցի Սբ. Գևորգ | 17 դ. | թաղամասի կենտրոնում | < | միանավ սրահ՝ վերակառ. 1903 թ. |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | եկեղեցու շուրջը | S | |
| Խաչքար | 17-18 դդ. | | S | պարզունակ |
| Տապանաքար Բալի զորավարի | 1791 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | < | Բալի Մելիք-Փարսադանյան՝ Դավիթ Բեկի զորավարներից |
| Տապանաքար Դավիթ-Բեկ Փարսադանյանցի | 1864 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | < | Դավիթ-Բեկ Փարսադանյանց՝ ռուսական բանակի զորավար |
| Տապանաքար տեր Սարգիս Մելիք-Փարսադանյանցի | 1842 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | S | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի Սբ. Մինաս | 17-18 դդ. | թաղամասի գործող գերեզմանոցի ա․ մասում, մուտքի մոտ | Հ | պահպանվել է ա․ պատը՝ 70 սմ բարձրությամբ |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1975 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Մատուռ | 10-11 դդ. | թաղամասից 1 կմ ամ, Վահանավանքից մոտ 2 կմ հվ | Հ | |
| Տապանաքար Տիկնանունի | 1019 թ. | մատուռի մոտ | Հ | |
| Շինություն | 17-19 դդ. | թաղամասի գործող գերեզմանոցի հս-ամ կողմում, ձորեզրին | Տ | թաղածածկ |
| Վանական համալիր Բեխի անապատ (Տանձափարախի անապատ, Արիստակես անապատ) | 10-17 դդ. | թաղամասից 4 կմ հվ-ա․, բարձր լեռան ա․ լանջին, անտառի մեջ | Հ | վերակառուցվել է 17 դ. 20-ական թթ. Արիստակես վարդապետի կողմից. ավերված, կարծիք կա, որ Փառարտովանքն է |
| Գավիթ | 17 դ. | կից է եկեղեցուն ամ-ից | Հ | պահպանվել են հիմքերը |
| Գերեզմանոց | 11-18 դդ. | համալիրի ա․ կողմում, լեռնալանջին | Հ | |
| Եկեղեցի | 17 դ. | համալիրի կենտրոնում | Հ | |
| Խաչքար | 10-11 դդ. | եկեղեցու մեջ | Հ | երկատված |
| Խաչքար տեր Հակոբի | 1757 թ. | եկեղեցու մեջ | Հ | |
| Միաբանության խցեր | 17 դ. | կից են ամ պարսպա-պատին | Հ | ավերված |
| Պարիսպ | 17 դ. | համալիրի շուրջը | Հ | պահպանվել են հիմքերը |
| Սեղանատուն | 17 դ. | կից է եկեղեցուն հվ-ից | Հ | կիսավեր |
| Խաչքար | 1116 թ. | | Հ | ստորին կես |
| Խաչքար Մակարի | 1054 թ. | | Հ | |
| Սրահ | 17 դ. | կից է սեղանատան ամ պատին | Տ | պահպանվել են հիմքերը |
| Բնակելի թաղամաս Շղարշիկ «Շիարջիկ» | | քաղաքից հս-ամ | | պատմական Շեկք գյուղն է, քաղաքի շրջագծի մեջ է մտել 1970-ական թթ. |
| Գերեզմանոց | 15-16 դդ. | թաղամասի հվ կողմում | Հ | ավերված է, տարածքում մահմեդականները կառուցել են սրբավայր՝ օգտագործելով հայկական տապանաքարերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի | 10-13 դդ. | թաղամասի դիմաց, Ողջի գետի աջափնյա անտառապատ ձորակում, Վահանավանքի աե կողմում | Հ | ավերված |
| Գյուղատեղի Խնկանց | 10-17 դդ. | թաղամասից 1 կմ աե | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-13 դդ. | | Հ | |
| եկեղեցի «Խնկոց վանք» | 17 դ. | գյուղատեղիի կենտրոնում | Հ | եկեղեցի Կարաքիլիսե, միանավ սրահ |
| Խաչքար | 10-11 դդ. | տեղադրված է եկեղեցու հս ավանդատան լուսամուտի մեջ | Հ | արձանագիր |
| Խաչքար | 14-15 դդ. | ընկած է եկեղեցու մեջ | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 7-6 դդ. | Վահանավանքից 1 կմ հս-ամ, «Էլեկտրոն» ճամբարի տարածքում | Հ | ավերված |
| Կամուրջ | 17-18 դդ. | թաղամասից 1 կմ հվ-ամ, Վահանավանք տանող կամրջից 500 մ ամ, Ողջի գետի վրա | Հ | պահպանվել է աջափնյա խելը |
| Մետաղաձուլարան | մ.թ.ա. 14-13 դդ. | Վահանավանքից մոտ 1 կմ հս | Հ | հայտնաբերվել է դաշույնի կաղապար |
| <u>Վանական համալիր Վահանավանք</u> | 10-11 դդ. | թաղամասի դիմաց, Ողջի գետի աջափնյա անտառապատ սարալանջին | Հ | կիսավեր է, հիմնադրել է Սյունյաց Ձագիկ իշխանի որդի Վահանը |
| Աղբյուր Խիկարի | 10-11 դդ. | համալիրից մոտ 200 մ աե | Հ | վերանորոգվել է 1968 թ. |
| Խաչքար հայր Խիկարի | 970 թ. | տեղադրված է աղբյուրի վրա | Հ | |
| Աղբյուր Վահանի | 10-11 դդ. | համալիրից 70 մ աե, ճանապարհի աջ կողմում | Հ | |
| Խաչքար | 11 դ. | ագուցված է աղբյուրի պատին | Հ | |
| Գավիթ | 10 դ. | կից է Սբ. Գրիգոր եկեղեցուն ամ-ից | Հ | ավերված |
| Տապանաքար Գևորգ Պահլավունու | 1101 թ. | գավթում | Հ | |
| Տապանաքար Խուշուշի | 11 դ. | գավթի աե մուտքի մոտ | Հ | հարթ |
| Տապանաքար Կատայի | 10-11 դդ. | գավթում | Հ | Կատա՝ դուստր Աշոտի |
| Տապանաքար Կյուրիկեի | 1099 թ. | գավթում, եկեղեցու մուտքի մոտ | Հ | Կյուրիկե՝ որդի Սենեքերիմ թագավորի |
| Տապանաքար Հովհաննեսի | 1317 թ. | գավթի աե որմնասյան մոտ | Հ | |
| Տապանաքար Վահան | 10 դ. | գավթում | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գավիթ | 10-11 դդ. | կից է Սբ. Աստվածածին եկեղեցուն ամ-ից | Հ | ավերված |
| Հուշակոթող | 11 դ. 2-րդ կես | գավիթից եկեղեցի տանող մուտքի աջակողմում | Հ | Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի արձանագրությամբ |
| Գերեզմանոց | 10-13 դդ. | վանքի բակում և շրջակայքում | Հ | տարածքում կան մ.թ.ա. 13-11 դդ. դամբարաններ |
| Խաչքար | 957 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | բեկոր. պատվիրատու՝ Ստեփանոս |
| Խաչքար Աղվանից Սոփի թագուհու | 1081 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց մոտ 25 մ աե | Հ | վերին աջ անկյունը կոտրված է |
| Խաչքար Անդրեաս քահանայի | 1007 թ. | վանքի բակի հս կողմում | Հ | |
| Խաչքար Գրիգորի և Սմբատիկի | 12 դ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց հս-աե | Հ | Սեներիմ թագավորի որդիներ Գրիգորն ու Սմբատիկը մահացել են 1166 թ. |
| Խաչքար Գևորգ երեցի | 1056 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց 10 մ հս-աե | Հ | |
| Խաչքար Գևորգ քահանայի | 1051 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Դվստաhի | 1084 թ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Խաչքար Հակոբ երեցի | 998 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Համամի | 10 դ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար հայր Եղուտի | 1094 թ. | վանքի բակում, ավերված շինության մոտ | Հ | |
| Խաչքար Հովհաննես վանահոր | 997 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Հրահատի | 954 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Մուսեի | 1049 թ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Խաչքար Ստեփանոսի | 965 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Ստեփանոսի | 966 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Խաչքար Ստեփանոս եկեղեցպանի | 1033 թ. | վանքի բակի հս կողմում | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կողմում | | |
| Տապանաքար | 11 դ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց մոտ 10 մ հս, ընկուզենու տակ | Հ | արձանագիր |
| Տապանաքար Գրիգոր Երիցու-վանեցու | 1102 թ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Գևորգ եկեղեցպանի | 1091 թ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց մոտ 17 մ հս-աե | Հ | հարթ |
| Տապանաքար Զուիթայի | 1101 թ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Խատատունի | 11 դ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Հասանի | 11 դ. վերջ | սյունասրահի հվ ճակատի մոտ | Հ | հարթ |
| Տապանաքար Մամուկի | 1050 թ. | վանքի բակի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Պետրոսի | 10 դ. | Սբ. Գրիգոր եկեղեցուց աե, սարալանջին | Հ | |
| Տապանաքար Ռաիիբի | 11 դ. վերջ | սյունասրահի մոտ | Հ | |
| Տապանաքար Սողոմոն Մարեջրեցու | 1084 թ. | համալիրի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Վարդուկի | 11 դ. | համալիրի հվ կողմում | Հ | |
| Տապանաքար Քուրդիկ Մարեջրեցու | 1076 թ. | համալիրի հվ կողմում | Հ | |
| եկեղեցի Սբ. Գրիգոր | 911 թ. | համալիրի հս կողմում | Հ | գլխավոր եկեղեցին է, կառուցել է Սյունյաց Ձագիկ իշխանի որդի Վահանը, ավերված |
| Եկեղեցի - տապանատուն Սբ. Աստվածածին | 1086 թ. | համալիրի բակի հվ մասում | Հ | երկհարկ է, կառուցել են Շահանդուխտ թագուհին և իր քույր Կատան |
| Շինություն | 10-11 դդ. | կից է Սբ. Գրիգոր եկեղեցու հս-աե անկյանը | Հ | ավերված |
| Շինություն | 10-11 դդ. | սյունասրահից մոտ 2 մ հվ-ամ | Հ | կիսավեր է, ենթադրվում է, որ վանքի սեղանատունն է |
| Խաչքար | 1042 թ. | ագուցված է շինության ամ լուսամուտի մեջ | Հ | պարզունակ է, պատվիրատու Սարգիս կրոնավոր |
| Սյունասրահ | 10 դ. | կից է Սբ. Գրիգոր եկեղեցուն և գավթին հվ-ից | Հ | ավերված է, կառուցել է Վահան Բ |
| Տապանաքար Աղվանից Սոփի թագուհու | 1081 թ. | սյունասրահի հվ-աե անկյան մոտ, ներքուստ | Հ | հարթ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տապանաքար Աշոտիկ իշխանի | 10 դ. | սյունասրահի հվ մասում | Հ | Աշոտիկ՝ Սմբատ Բ և Գրիգոր Ա Սյունյաց թագավորների հայր |
| Տապանաքար Գրիգոր թագավորի | 1072 թ. | սյունասրահի հս պատի մոտ | Հ | Գրիգոր Ա՝ Սյունյաց թագավոր, որդի Աշոտիկ իշխանի |
| Տապանաքար Գրիգորի | 11 դ. | սյունասրահում | Հ | ենթադրվում է, որ Սյունյաց Գրիգոր եպիսկոպոսի տապանաքարն է |
| Տապանաքար Գևորգի | 11 դ. վերջ | սյունասրահում | Հ | Գևորգ՝ որդի Մեհևանի |
| Տապանաքար Դինարի | 11 դ. | սյունասրահի հս պատի մոտ | Հ | հարթ |
| Տապանաքար Խաղբակի | 1061 թ. | սյունասրահում | Հ | |
| Տապանաքար Կատայի | 11 դ. վերջ | սյունասրահում | Հ | Կատա՝ քույր Շահանդուխտ թագուհու |
| Տապանաքար Հրանուշի | 11 դ. | սյունասրահում | Հ | ենթադրվում է, որ Հրանուշը Սյունյաց Սմբատ Բ թագավորի կինն է |
| Տապանաքար Ջվանշերի | 10 դ. | սյունասրահում | Հ | Ջվանշեր՝ ավագ որդի Ձագիկ գահակալ իշխանի |
| Տապանաքար Սմբատ Բ թագավորի | 1051 թ. | սյունասրահի հվ պատի մոտ, ներքուստ | Հ | |
| Տապանաքար Սևադայի | 11 դ. | սյունասրահում | Հ | |
| Բնակելի թաղամաս Վերին Վաչագան | | քաղաքի հվ-ամ կողմում, բարձրադիր անտառապատ վայրում | | |
| Գերեզմանոց | 17-20 դդ. | թաղամասի հվ-ամ եզրին | Տ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1968 թ. | | Տ | |
| Գյուղատեղի Վաչագան | միջնադար | թաղամասից 4 կմ ամ, Խուստուփ լեռան ստորոտին | Հ | գյուղատեղի Քոլվա |
| Եկեղեցի | 10-11 դդ. | | Հ | կանգուն է |
| Քարայր - ուխտատեղի | | | Հ | մուտքի մոտ կան խաչքարեր |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 17 դ. | թաղամասի կենտրոնում | Հ | միանավ սրահ |
| Կամուրջ | 871 թ. | թաղամասից 1 կմ աե | Հ | միաթռիչք, հետագայում քանիցս վերանորոգվել է |
| Հուշաղբյուր Արցախյան | 1995 թ. | թաղամասի կենտրոնում | Տ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| զոհվածներին | | | | |
| Գյուղատեղի | 17-20 դդ. | քաղաքից 5-6 կմ հս-աե | Հ | Բաշքենդ գյուղն է՝ լքված 1957 թ., ապրել են հույն պղնձագործներ |
| Եկեղեցի | 1765 թ. | | Հ | հունական |
| Զանգակատուն | 1765 թ. | կից է եկեղեցու ամ ճակատին | Հ | |
| Դամբարան | 18 դ. | եկեղեցու ամ կողմում | Հ | եկեղեցու շինարարի դամբարանն է |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | քաղաքի գործող գերեզմանոցի տարածքում | Հ | սովխոզի գերեզմանոցի դամբարանադաշտն է. պարբերաբար ավերվում է նորագույն թաղումների հետևանքով |
| Դամբարանադաշտ Թեղուտի | մ.թ.ա. 2 հզ կեսեր | քաղաքի Չերյոմուշկա թաղամասի տարածքում | Հ | |
| Խաչքար | 1046 թ. | երկրագիտական թանգարանում | Հ | տեղափոխվել է Վահանավանքից |
| Խաչքար Արցախում զոհված ազատամարտիկներին | 1993 թ. | քաղաքի մեջ | Տ | |
| Հուշահամալիր | 1970-1990-ական թթ. | քաղաքից 200 մ հվ, Բաղաբերդ տանող ճանապարհի ձախակողմյան բարձունքին | Տ | |
| Գերեզմանոց Արցախյան պատերազմում զոհված կապանցիների | 1992-1994 թթ. | հուշահամալիրի երրորդ հարթակում | Տ | |
| Խաչքար Անհայտ զինվորի | 2005 թ. | հուշահամալիրի երկրորդ հարթակում | Տ | |
| Հուշարձան Մեծ եղեռնի, 1988 թ. Սումգայիթի և Բաքվի զոհերին | 1990 թ. | հուշահամալիրի առաջին հարթակում | Տ | հեղ.՝ Յու. Գևորգյան |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների | 1987 թ. | հուշահամալիրի չորրորդ հարթակում | Տ | հեղ.՝ Ց. Արմենյան, Ռ. Դանիելյան |
| Հուշահամալիր Գարեգին Նժդեհի | 2001 թ. | քաղաքի ամ եզրին, Ողջի գետի աջ ափին | Հ | հեղ.՝ Գ. Գևորգյան |
| Հուշահամալիր Դավիթ Բեկի | 1983 թ. | հրապարակի հս-աե եզրին | Հ | քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյան, ճարտարապետ՝ Վարուժան Սահակյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հուշաղբյուր Հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ զոհված երեխաներին | 1992 թ. | քաղաքի մեջ | Տ | |
| Հուշարձան Հունան Ավետիսյանի | 1959 թ. | քաղաքի կենտր. զբոսայգում | Հ | քանդ. Սարգիս Բաղդասարյան |
| Քաղաքատեղի Կապան | 5-11 դդ. | Կապան-Քաջարան ճանապարհին, Ողջի գետի բարձրադիր աջ ափին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-12 դդ. | քաղաքատեղիում, «Գանձասար» ճամ-բարից մոտ 300 մ հս | Հ | |
| Գերեզմանոց | 10-12 դդ. | քաղաքատեղիում, «Տանձու լենջ» վայրում | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-15 դդ. | քաղաքատեղիում, «Գանձասար» ճամբարի հս-ամ եզրին | Հ | տարածքում նկատելի են մատուռի ավերակներ |
| Դամբարանաբլուր | մ.թ.ա. 2-1 հզ | «Գանձասար» ճամ-բարից մոտ 300 մ հս տարածվող գերեզմանոցում | Հ | |
| Կամուրջ | 10-12 դդ. | քաղաքատեղիում, Ողջի գետի վրա | Հ | պահպանվել է ձախափնյա խելը |

## ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 10-13 դդ. | գյուղից 1 կմ հվ-ամ, Կապան տանող ճանապարհի աջ կողմում, սարի ստորոտին | Հ | հվ-ամ կողմում կան հավանաբար մատուռի ավերակներ |
| Գերեզմանոց | 15-17 դդ. | գյուղից 1 կմ ամ | Հ | |
| Եկեղեցի | 17 դ. | | Հ | միանավ, կիսավեր սրահ |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 1830 թ. | գյուղի կենտրոնում | Հ | միանավ սրահ |
| Եկեղեցի Սարդարանց | 10-11 դդ. | գյուղից 1 կմ աե | Հ | միանավ, կիսավեր սրահ |
| Գերեզմանոց | 10-13 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1960 թ. | գյուղի կենտրոնում | Տ | |
| Մատուռ - սրբատեղի Ջուխտակ մանդրոտ | | գյուղից 3 կմ հվ, բարձր | Տ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խաչքար | 11 դ. | սրբատեղիի ան պատին | Հ | արձանագիր է, պարզունակ |
| Խաչքար | 11 դ. | սրբատեղիի ան պատին | Հ | արձանագիր է, պարզունակ |

## *ԱՂՎԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ 1-ին կես | գյուղի հվ և հվ-ան եզրին, անասնագոմերի տարածքում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ. | գյուղից 400 մ հս-ան, Երևան-Կապան մայրուղու երկու կողմի սարալանջերին | Հ | |
| Դամբարանադաշտ | վաղ երկաթի դար | գյուղի ամ եզրին, սարալանջի վրա | Հ | |
| Եկեղեցի | 17-18 դդ. | գյուղի ամ մասում, կառուցապատված միջավայրում | Հ | ավերված է |
| Եկեղեցի | 17-18 դդ. | գյուղի հվ եզրին | Հ | ավերված է |
| Գերեզմանոց | 17-18 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | ավերված է |
| Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1982 թ. | գյուղի մեջ | Տ | |

## *ԱՆՏԱՌԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | | գյուղից 3 կմ ամ | Հ | |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 10 դ. | գյուղից ամ | Հ | |
| Գերեզմանոց | 10-14 դդ. | | Հ | |
| Հուշաղբյուր | 1970 թ. | գյուղ մտնող ճանապարհի աջակողմում | Տ | |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 10-18 դդ. | գյուղի մեջ | Հ | |
| Եկեղեցի Սբ. Ստեփանոս | 1430 թ. | գերեզմանոցում | Հ | |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | գյուղի հս եզրին | Հ | |
| Մատուռ | 19 դ. | | Հ | կառ.՝ Սմբատ Մելիք-Ստեփանյան |
| Գյուղատեղի Կռապաշտ | միջնադար | գյուղից 1 կմ ամ | Հ | |
| Գերեզմանոց | միջնադար | | Հ | |
| Եկեղեցի | 10 դ. | | Հ | |
| Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1985 թ. | գյուղի մեջ | Տ | |

## ԱՐԾՎԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Բնակելի քարայր | միջնադար | գյուղի ամ կողմում, կիրճում | Հ | 1 մեծ և 2 փոքր սրահներ են |
| Գերեզմանոց | 10-16 դդ. | գյուղի ամ եզրին, բլրալանջին | Հ | |
| Խաչքար | 10-11 դդ. | | Հ | |
| Խաչքար Ամիրճանի | 1483 թ. | գերեզմանոցի աե մասում | Հ | |
| Խաչքար Մինախաթունի | 1483 թ. | գերեզմանոցի ամ մասում | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1968 թ. | գերեզմանոցում | Տ | |
| Տապանաքար | 15-16 դդ. | գերեզմանոցի հվ-աե մասում | Հ | արձանագիր է, օրորոցաձև, կազմող՝ Սահակ |
| Գերեզմանոց | 11-20 դդ. | գյուղից 0.5 կմ հվ-ամ | Հ | գործող |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 13 դ. | | Հ | միանավ սրահ |
| Խաչքար | 1050 թ. | ընկած է եկեղեցու մեջ | Հ | բեկոր |
| Խաչքար | 11 դ. | եկեղեցու խորանում | Հ | արձանագիր է, ծառայում է որպես վեմքար |
| Խաչքար | 11-12 դդ. | ագուցված է եկեղեցու | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խաչքար՝ Գրիգորի և Ստեփանոս երեցի | 11-12 դդ. | ագուցված է եկեղեցու հս պատին, ներքուստ | Հ | |
| Խաչքար | 15-16 դդ. | գերեզմանոցում, եկեղեցուց մոտ 4 մ հվ | Հ | արձանագիր է, կիսով չափ հողի մեջ խրված |
| Տապանաքար Ռոստամի | 1609 թ. | գերեզմանոցում, եկեղեցուց մոտ 10 մ հս | Հ | օրորոցաձև է, վարպետ՝ Ավագ |
| Տապանաքար Մարտիրոսի և Գրիգորի | 17 դ. | գերեզմանոցում, եկեղեցուց մոտ 10 մ հս | Հ | օրորոցաձև է, երկլեզվյան արձանագրությամբ, վարպետ՝ Ավագ |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղից աե, գոմերի հարևանությամբ | Հ | մասնակիորեն ավերվել է շինարարության հետևանքով |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղից 2 կմ աե, «Հում հողեր» վայրից 0.6 կմ հվ | Հ | ձգվում է մինչև «Ձկրոտի դաշտ» |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հզ | գյուղից հվ-ամ, «Արնաձոր» հեղեղատի ափին | Հ | մասնակիորեն ավերվել է շինարարության հետևանքով |
| Եկեղեցի | 1855 թ. | գյուղի մեջ | Հ | եռանավ բազիլիկ |
| Խաչքար | 1017 թ. | գյուղի երկրագիտական թանգարանում | Հ | |
| Խաչքար | 1263 թ. | գյուղի երկրագիտական թանգարանում | Հ | |
| Խաչքար Դավթի | 10-11 դդ. | գյուղի երկրագիտական թանգարանում | Հ | |
| Հուշաղբյուր | 1906 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Մատուռ | 11 դ. | գյուղից 3 կմ հվ-աե | Հ | ժայռափոր |
| Մատուռ «Ճգնավորի» | 11-13 դդ. | գյուղից 3 կմ հվ-ամ | Հ | |
| Շենք դպրոցի | 1871 թ. | գյուղի մեջ | Հ | գյուղի հին դպրոցի շենքն է |
| Վանական համալիր Երիցավանք | 6-11 դդ. | գյուղից 3 կմ աե, բարձր սարահարթի վրա | Հ | կիսավեր է, հիմնադրել է Սյունյաց Երիցակ մետրոպոլիտը |
| Գավիթ | 10-11 դդ. | կից է զանգակատանն ամ-ից | Հ | պահպանվել է հվ պատը |
| Գերեզմանոց | 6-19 դդ. | համալիրի հս կողմում | Հ | |
| Եկեղեցի Սբ. Ստեփանոս Նախավկա | 6 դ. | | Հ | միանավ թաղածածկ սրահ |
| Զանգակատուն | 10-11 դդ. | կից է եկեղեցուն ամ-ից | Հ | կիսավեր |
| Մատուռ | 10-11 դդ. | համալիրի հս կողմում | Հ | կիսավեր |
| Շինություն | 15-17 դդ. | համալիրի հվ-աե եզրին | Հ | ժայռափոր է, ավերված |
| Պարիսպ | | համալիրի շուրջը | Հ | պահպանվել է աե պարսպապատից մի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սրահ | 6 դ. | կից է եկեղեցուն հվ-ից | Հ | ավերված |
| Քարայրերի համալիր | միջնադար | վանքի հս-ամ կողմում | Հ | 4 մեծ և մի քանի փոքր բնական այրեր են |
| Տապանաքար | 15-16 դդ. | գյուղի երկրագիտական թանգարանում | Հ | խոյաձև |

## ԳԵՂԱՆՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Աղբյուր | 1968 թ. | գյուղի մոտ | Տ | թաղակապ |
| Բնակատեղի | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղից 700 մ հվ-աե, «Ներքին Խաչին արտ» վայրում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | | Հ | |
| Բնակելի տուն | 19-20 դդ. | գյուղի մեջ | Տ | Ավագյանների տունը, երկհարկ |
| Բնակելի տուն | 19-20 դդ. | գյուղի հս մասում | Տ | Թ. Պետրոսյանի տունը. երկհարկ, կիսավեր |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | գյուղի աե կողմում | Հ | |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 1870 թ. | գերեզմանոցում | Հ | եռանավ բազիլիկ, վերանորոգված 1987 թ. |
| Գյուղատեղի | միջնադար | գյուղից 1.5 կմ հվ-աե, «Շինատեղ» վայրում | Հ | ավերված |
| Գերեզմանոց | միջնադար | եկեղեցուց հվ | Հ | ավերված |
| Եկեղեցի | միջնա-դար | | Հ | պահպանվել են հիմքերը |
| Գյուղատեղի Սրիակ «Սրիակ, Վերին Սրիակ» | 10-17 դդ. | գյուղից 4 կմ ամ, Գեղանուշ գետի ձախ ափին, լեռան հարավահայաց լանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-17 դդ. | գյուղատեղիի հս-աե մասում | Հ | |
| Եկեղեցի «Կարմիր» | 10-13 դդ. | գյուղատեղիի ամ մասում | Հ | ավերված միանավ սրահ է |
| Եկեղեցի «Հանգած Եկեղեցի» | 17 դ. | գյուղատեղիի աե մասում | Հ | կիսավեր միանավ սրահ է՝ ներքուստ հնգանիստ խորանով |
| Խաչքար | 10-11 դդ. | եկեղեցու խորանում | Հ | արձանագիր |
| Գյուղատեղի | միջնադար | գյուղից 2 կմ ամ | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| եկեղեցի | միջնադար | | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղի մեջ, դպրոցամերձ այգում և հարակից տնամերձ հողամասերում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ կեսեր | «Վերին խաչին արտ» վայրում | Հ | |
| եկեղեցի | 9-10 դդ., վերակառ. 17 դ. | գյուղի աե կողմում | Հ | միանավ սրահ՝ վերանորոգված 1986-1988 թթ., նախ. հեղ. Ա. Հովսեփյան |
| Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1959 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Հուշարձան՝ Մուշեղ Հարությունյանի | 2000 թ. | գյուղի դպրոցի բակում | Տ | Մ. Հարությունյան՝ ԽՍՀՄ հերոս |

## ԴԱՎԻԹ ԲԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի | 10-17 դդ. | գյուղից մոտ 1 կմ<br>հս-աե, «Քարին տակ» վայրում | Հ | ավերվել է անասնագոմեր կառուցելու հետևանքով |
| Գերեզմանոց Շիխ | 16-17 դդ. | | Հ | |
| Գյուղատեղի Բերդիկ | 9-17 դդ. | գյուղից 4 կմ ամ, անտառապատ վայրում | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 13-17 դդ. | գյուղատեղիի մեծ եկեղեցուց մոտ 150 մ հս | Հ | |
| եկեղեցի | 9-10 դդ. | բարձր բլրի գագաթին | Հ | միանավ փոքր կիսավեր սրահ է |
| եկեղեցի | 17 դ. | գյուղատեղիի կենտրոնում | Հ | միանավ մեծ կիսավեր սրահ է |
| Գյուղատեղի Տախն (Դախ) | 10-19 դդ. | գյուղից 3 կմ հվ, անտառապատ վայրում | Հ | բնակիչները տեղափոխվել են Դավիթ Բեկ գյուղ 19 դ. վերջերին |
| Գերեզմանոց | 10-19 դդ. | գյուղատեղիի աե մասում | Հ | |
| Խաչքար | 10-11 դդ. | եկեղեցու հվ պատի մոտ | Հ | վերնամասը ջարդոտված |
| Խաչքար | 15-16 դդ. | եկեղեցու հս պատի մոտ | Հ | երկատված |
| եկեղեցի | 15-17 դդ. | գերեզմանոցում | Հ | միանավ կիսավեր սրահ է |
| եկեղեցի | 17 դ. | գյուղից 6 կմ հս-ամ | Հ | |
| եկեղեցի Կարանի | 9-10 դդ. | գյուղից 1 կմ հս | Հ | միանավ սրահ |
| Գերեզմանոց | | | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի Սբ. Ստեփանոս | 1868 թ. | գյուղի հս-աե մասում | Հ | միանավ սրահ |
| Տապանաքար՝ տեր Ավետիսի | 1686 թ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | Հ | |
| Կամուրջ | 1909 թ. | գյուղից մոտ 1 կմ հս-աե | Տ | միաթռիչք |
| Հուշաղբյուր | 1953 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1973 թ. | գյուղի կենտրոնում | Տ | |

## ԵՂԵԳ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Եղեգավանք | 10-17 դդ. | գյուղից 1 կմ հս-աե, սարալանջին | Հ | գյուղատեղի Աղքիլիսա, ավերված |
| Գերեզմանոց | միջնադար | | Հ | ավերված |
| Եկեղեցի | 10 դ. | | Հ | ավերված |
| Եկեղեցի | 17 դ. | գյուղի մեջ | Հ | ավերված |

## ԵՂՎԱՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 14-15 դդ. | գյուղից 1 կմ աե, «Խաչ» վայրում | Հ | ավերված |
| Գյուղատեղի Շինատեղ | միջնադար | գյուղից մոտ 2 կմ աե, բարձր ձորակողին | Հ | բնակիչները տեղափոխվել են Եղվարդ |
| Եկեղեցի «Սպիտակ խաչի աղբյուր» | միջնադար | գյուղից 1 կմ հս | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 12-13 դդ. | եկեղեցու մոտ | Հ | փոքր |
| Գերեզմանոց | 12-13 դդ. | | Հ | մեծ |
| Խաչքար | 1056 թ. | գերեզմանոցի հվ-աե մասում | Հ | վերնամաս |
| Խաչքար | 1240 թ. | գերեզմանոցի աե մասում | Հ | |
| Խաչքար Պատոն վարդապետի | 1203 թ. | գերեզմանոցի աե մասում | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1970 թ. | | Տ | |
| Եկեղեցի Սբ. [illegible] | [illegible] | [illegible] | Հ | [illegible] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 10-19 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | |
| Տապանաքար | 1646 թ. | գերեզմանոցի հվ մասում | Հ | կենցաղային տեսարանով |
| Տապանաքար Թորոս իշխանի և նրա երկու զինակիցների | 1724 թ. | գերեզմանոցի հվ եզրին | Հ | կազմող՝ Բագրատ, օրորոցաձև է՝ թվագրված 1654-ով, 1724 թ. Թորոս իշխանի սպանության ստույգ տարեթիվն է |
| Խաչքար Ղարախանի | 16 դ. | ագուցված է եկեղեցու հվ ճակատին | Հ | |
| Տապանաքար Ղազարի | 15-16 դդ. | ագուցված է եկեղեցու հվ պատին | Հ | |

## ԽԴՐԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | միջնադար | գյուղից 1 կմ հս-ամ | Հ | |
| եկեղեցի | 1899 թ. | գյուղի մեջ | Հ | |
| Վանք «Չորեքդռնի» («Չորեքդռնե») | 10-11 դդ. | գյուղից 2 կմ աե | Հ | ունեցել է 3 եկեղեցի, որոնցից 2-ն ավերված են |
| եկեղեցի | 10-11 դդ. | | Հ | կանգուն |
| Խաչքար | 13-14 դդ. | եկեղեցու մուտքի մոտ | Հ | արձանագիր |
| Պարիսպ | | վանքի շուրջը | Հ | պահպանվել է հատվածաբար |

## ԾԱՎ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Ամրոց | | գյուղից 3 կմ հվ, Ծավ գետի բարձրադիր աջ ափին | Հ | ամրոց Ղազաղուան |
| Ամրոց Աղջկա բերդ | 10-13 դդ. | գյուղից 2 կմ հվ-ամ, սարի գագաթին | Հ | ամրոց Ղըզղալա, ավերված |
| Գյուղատեղի | միջնադար - 20 դ. | գյուղից 5 կմ հեռու, բարձրադիր անտառապատ վայրում | Հ | գյուղատեղի Սանալու, լքվել է հավանաբար 1918-1920 թթ. |
| Գերեզմանոց | միջնադար - 20 դ. | | Հ | |
| եկեղեցի | միջնադար | | Հ | ավերված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Թարգմանչաց | 10-13 դդ. | գյուղից 1 կմ հս, անտառում | Հ | այլ անվանումներ՝ Թրջմնաց, Թնջումնաց, Թրջմոնանց, Թրջմունանք |
| Գերեզմանոց | 10-13 դդ. | | Հ | ավերված |
| Եկեղեցի «Թարգմանչաց» | 10-11 դդ. ? | | Հ | կիսավեր է, թաղածածկ |
| Գյուղատեղի Կեմանց | 1866-1939 թթ. | գյուղից 4.5 կմ ամ, Ծավ - Շիշկերտ ճանապարհից աջ, անտառի բացատում | Տ | ավերված |
| Գերեզմանոց | 1866-1939 թթ. | եկեղեցու մոտ | Տ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1966 թ. | գյուղատեղիի գերեզմանոցում | Տ | հեղ. Վ. Արշակյան |
| Եկեղեցի | 19 դ. 2-րդ կես | գյուղատեղիի հս եզրին | Հ | միանավ կիսավեր սրահ է |
| Կամուրջ | 17 դ. | | Հ | |
| Գյուղատեղի Նավս | միջնադար | գյուղից 3 կմ հվ-ամ, Ծավ գետի աջ ափին, Նավսաքար լեռան լանջին | Հ | |
| Գերեզմանոց | | | Հ | |
| Եկեղեցի | | | Հ | կիսավեր |
| Եկեղեցի | միջնադար | գյուղից 7 կմ հվ-ամ, Մթնաձորում | Հ | |
| Եկեղեցի Սբ. Գևորգ | 17-18 դդ., վերակառ. 1907 թ. | գյուղի մեջ | Հ | միանավ սրահ |
| Խաչքար | 11 դ. | ագուցված է եկեղեցու հվ պատին, մուտքից վեր | Հ | եկեղեցու նորոգման տարեթիվը փորագրված է այս խաչքարի վրա |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1965 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Խաչքար Արցախյան պատերազմում Ծավ և Շիշկերտ գյուղերի զոհվածներին | 1999 թ. | | Տ | |
| Շինություն | 17-18 դդ. | գյուղից 1.5 կմ ամ, Ծավ - Շիշկերտ ճանապարհից աջ, հիմնավեր Դալլաքլու գյուղատեղիում | Հ | թաղածածկ, վայրը ներկայումս հայտնի է Խնձորուտ անվամբ |
| Քարավանատուն | 16-17 դդ. | գյուղից մոտ 1 կմ հվ-ամ, Ծավ գետի ափին | Հ | ավերված |

## ՇԻՇԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի | 16-20 դդ. | գյուղից 5 կմ հվ | Հ | գյուղատեղի Մազրա (Ներքին Մազրա), ապաբնակեցվել է 1939 թ. |
| Եկեղեցի | 17 դ. | | Հ | |
| Գյուղատեղի Շիշկերտ | 17-20 դդ. | գյուղից հս, սարալանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | եկեղեցուց հս և հս-ամ | Հ | |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 17 դ. | Մեղրի տանող ճանապարհին | Հ | միանավ սրահ |
| Եկեղեցի | 17 դ. | գյուղից 2 կմ հս-աե, գետի աջափնյակում, «Նատրի» վայրում | Հ | միանավ սրահ |
| Կամուրջ | | Մազրա գետակի վրա | Հ | |
| Հուշաղբյուր Նավասարդ Հարությունյանին | 1990 թ. | գյուղից 4 կմ աե, Շիշկերտ - Ծավ ճանապարհից ձախ | Տ | Ն. Հարությունյան 21-րդ գվարդիական տանկային բրիգադի հրամանատար |
| Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1967 թ. | գյուղի աե եզրին | Տ | |

## ԿԱՂՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հզ | Գորիս-Կապան ճանապարհի եզրին | Հ | |
| Եկեղեցի Անապատ | 17 դ. | գյուղից 2 կմ աե | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1975 թ. | գյուղի մեջ | Տ | |

## ՁՈՐԱՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի Սբ. Երրորդություն | 1830 թ. | գյուղի մեջ | Հ | կառ.՝ Մարտիրոս և Ավետիս Տեր-Մինասյաններ, Գրիգոր Մարտիրոսյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տապանաքար՝ տանուտեր Գրիգոր Տեր-Կարապետյանցի | 1882 թ. | | Հ | |
| եկեղեցի «Կոտրած եղցի» | 17 դ. | գյուղից 0.5 կմ հս, «Սալիներար» հանդամասում | Հ | |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | | Հ | |
| Տապանաքար տեր Մինասի | 1792 թ. | գերեզմանոցում | Հ | |
| Տապանաքար տեր Մկրտչի | 19 դ. | գերեզմանոցում | Հ | |
| Կամուրջ | 16-17 դդ. | գյուղից 0.5 կմ ամ | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1980 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Մատուռ | 9-10 դդ. | գյուղից 3.5 կմ հվ-ամ | Հ | |

## *ՎԱՆԵՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Հոռոմանց | 17-20 դդ. | գյուղից 1 կմ հվ | Հ | գյուղը լքվել է 1926-ից հետո |
| եկեղեցի | 17 դ. | | Հ | կանգուն |

## *ՃԱԿԱՏԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Բնակատեղի | էնեոլիթ | գյուղի մեջ | Հ | տարածքը վերածվել է բանջարանոցների |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | գյուղից 4.3 կմ ատ, «Մեծ արտ» վայրում | Հ | |
| Գյուղատեղի Գլմեշ (Գրմեշ) | ուշ միջնադար | գյուղից 4 կմ ամ, անտառում | Հ | |
| Գյուղատեղի Իրիգիս | միջնադար | գյուղից 3.5 կմ հվ-ատ, Շիկահող տանող ճանապարհին, բարձրադիր վայրում | Հ | ավերված է, կարծիք կա, որ պատմական Եղեգիքն է |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | | Հ | գերեզմանոց Իրիգիսի բարահիր, ավերված է, անտառածածկ |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հազ. | գյուղատեղիի եզրին | Հ | արտաքին նշանները մասնակիորեն ավերված են |
| Գյուղատեղի Շնղենե | միջնադար - 20 դ. | գյուղից 6-7 կմ հվ | Հ | ապաբնակեցվել է 1930-ական թթ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | Կապան - Ճակատեն ճանապարհին, «Ուռած քար» վայրում | Հ | |
| Եկեղեցի | ուշ միջնադար | գյուղից 2 կմ հվ-աե, հիմնավեր Գեղեցիփոսթ գյուղատեղիում | Հ | ավերված է, պահպանվել են հս և հվ պատերից հատվածներ |
| Եկեղեցի | 19 դ. | գյուղի կենտրոնում | Հ | միանավ սրահ |
| Գերեզմանոց | 19 դ. | եկեղեցու շուրջը | Հ | |
| Խաչքար՝ Գեորգի և Հարբի | 1021 թ. | գյուղից մոտ 1 կմ հվ-աե, «Համզաբակ» վայրում | Հ | |
| Խաչքար | 11 դ. | գյուղից մոտ 1 կմ հվ-աե, «Համզաբակ» վայրում | Հ | |
| Կամուրջ | 17 դ. | գյուղի մոտ | Հ | ավերված է |
| Հուշաղբյուր Արցախյան ազատամարտում զոհվածներին | 2005 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1967 թ. | գյուղի մեջ | Տ | |

## ՆԵՐՔԻՆ ԽՈՏԱՆԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1960 թ. | գյուղի հվ եզրին | Տ | |

## ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 19 դ. | գյուղից հվ-ամ, Ներքին Հանդ լքված գյուղի հս-աե կողմում | Հ | գյուղը լքվել է 1980-ական թթ. |
| Եկեղեցի | 18-19 դդ. | գյուղից հվ-ամ, Ներքին Հանդ լքված գյուղում | Հ | միանավ սրահ |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1965 թ. | գյուղից հվ-ամ, Ներքին Հանդ լքված գյուղի հս-աե եզրին | Տ | |

## ՆՈՐԱՇԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Բնակատեղի | մ.թ.ա. 2-րդ հզ - մ.թ.ա. 1 ... | Նորաշենիկ - Աղվանի խաչմերուկին հարող բլրի վրա, Աճանան ... | Հ | մասնակիորեն ավերվել է շինարարության ... |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-րդ հզ - մ.թ.ա. 4 դ. | | Հ | |
| Գյուղատեղի Հին Նորկ (Ներքին Նորաշենիկ) | միջնադար - 20 դ. | գյուղից 0.5 կմ աե | Հ | գյուղը լքվել է 1930-ական թթ. |
| Գերեզմանոց | միջնադար - 20 դ. | | Հ | |
| Եկեղեցի | 17 դ. | | Հ | կիսավեր |
| Եկեղեցի | 17 դ. | գյուղի մեջ | Հ | վերանորոգ. Բաղալյաններ |
| Հուշաղբյուր | 1976 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1971 թ. | գյուղի մեջ | Տ | |

## ՇԻԿԱՀՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Ամրոց Կոնասար | | գյուղից 2 կմ հվ | Հ | |
| Գյուղատեղի | ուշ միջ-նադար -20 դ. սկիզբ | գյուղից 6-7 կմ աե | Հ | գյուղատեղի Դշլաղ, ավերված |
| Գյուղատեղի Աքլորի քար | ուշ միջնադար | գյուղից 6 կմ հս-ամ, Շիկահողի պետական արգելոցի տարածքում | Հ | ավերված |
| Գյուղատեղի Գեղցահանդ | 10-19 դդ. | գյուղից 4 կմ հվ-աե, ձորալանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 18-19 դդ. | | Հ | |
| Եկեղեցի «Ձորի» (Ծերիգդեցի) | ուշ միջ-նադար | | Հ | ավերված |
| Գյուղատեղի Վերին Գեղցահանդ | 10-18 դդ. | գյուղից 3 կմ հվ-աե, ձորալանջին | Հ | ավերված |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ | գյուղից 100 մ հս, «Սպիտակ հողեր» («Սալորի ձոր») հանդամասում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ | գյուղից 500 մ հս, «Կապեն արտ» վայրում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ | «Թթուջուր» վայրում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ | «Կարմիր հողեր» վայրում | Հ | |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հզ | գյուղից 1.5-2 կմ ամ, Շիկահողի պետական արգելոց տանող ճանա-պարհին, անտառում, «Քարաղբյուր» վայրում | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | ուշ միջնադար | գյուղի մեջ, բարձունքի վրա | Հ | միանավ սրահ |
| Գերեզմանոց | 17-20 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | |
| Տապանաքար Մովսես քահանա Մելիք - Նուբարյանցի | 1841 թ. | եկեղեցու մոտ | Հ | |
| Կամուրջ | 1886 թ. | գյուղի աե եզրին, Շիկահող գետակի վրա | Տ | միաթռիչք |
| Հուշաղբյուր Թավադ Բաղդասարյանի | | գյուղից 4 կմ հս, Շիկահող - Ճակատեն ճանապարհի ձախ կողմում | Տ | Թ. Բաղդասարյանը զոհվել է Բրեստում, 1941 թ. |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1968 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Խաչքար Արցախում զոհված ազատամարտիկներին | 1999 թ. | | Տ | |
| Ջրաղաց «Տերերանց» | 19 դ. | գյուղից 2 կմ աե, Շիկահող գետակի ձախափնյա ձորալանջին | Տ | |

## ՇՐՎԵՆԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գերեզմանոց | 14-19 դդ. | գյուղի ամ եզրին | Հ | |
| Եկեղեցի | 19 դ. | Գերեզմանոցում | Հ | միանավ սրահ |
| Եկեղեցի | 19 դ. | կից է նախորդին հվ-ից | Հ | միանավ սրահ |
| Եկեղեցի | 1003 թ. | գյուղից հս-աե | Հ | Դավիթ երեցի շինարարական արձանագրությամբ |
| Հուշաղբյուր | 1975 թ. | գյուղի մեջ | Տ | |
| Շենք դպրոցի | 1901 թ. | գյուղի մեջ | Հ | գյուղի հին դպրոցի շենքն է, կառ. նավթարդյունաբերող Մարգարյան |
| Վանք «Պողոսի» | միջնադար | գյուղից 2 կմ ամ | Հ | |

## ՉԱՓՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Ըրկենաց | 10 դ.- 1959 թ. | Արծվանիկ - Եղեգ խճուղուց 1.5 կմ աջ, անտառապատ վայրում | Հ | 1959 թ. գյուղը միացվել է Չափնիին |
| Գերեզմանոց | 10-20 դդ. | գյուղատեղիում | Հ | |
| Խաչքար Գևորգի | 1718 թ. | | Հ | |
| Տապանաքար Բարխուդարի | 1719 թ. | | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1972 թ. | գյուղատեղիում | Տ | |
| Եկեղեցի | 1912 թ. | գյուղի մեջ | Հ | եռանավ բազիլիկ, կառուցվել է Խաչատուր Մելիք-Դադայանցի միջոցներով |

## ՍՅՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 1 հզ | գյուղից 2 կմ հվ-աե, Կերեն տանող ճանապարհին | Հ | հողի կտրվածքից հայտնաբերվել են միջնադարյան խեցեղենի բեկորներ |
| Ջրաղաց | 20 դ. սկիզբ | գյուղի ամ եզրին | Տ | |

## ՄՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Աղնաշեն (Աղնախատեղ) | միջնադար | գյուղից 2 կմ հս-ամ | Հ | ավերված |
| Ամրոց | միջնադար | | Հ | ավերված |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 17-18 դդ. | գյուղի մեջ | Հ | եռանավ բազիլիկ |
| Գերեզմանոց | 19-20 դդ. | եկեղեցուց ամ | Հ | |
| Խաչքար | 10 դ. | հենած է եկեղեցու հվ ճակատին | Հ | |
| Խաչքար | 10 դ. | ագուցված է եկեղեցու հվ պատին, ներքուստ, մուտքից ձախ | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1967 թ. | գյուղի մեջ, եկեղեցու մոտ | Տ | |

## ՍԵՎԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Հունուց ձոր | 10-17 դդ. | գյուղից 3 կմ հս | Հ | |
| Գերեզմանոց | 10-17 դդ. | | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | ուշ միջնա-դար | | Հ | |
| Եկեղեցի | 17-18 դդ. | գյուղի կենտրոնում | Հ | եռանավ բազիլիկ |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1968 թ. | գյուղի կենտրոնում | Տ | |
| Զիթհան | 1846 թ. | գյուղի մեջ | Հ | |

## *ՎԱՐԴԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | միջնադար | գյուղից Կապան տանող մայրուղուց ձախ, «Ներքին Գյոդակլու» վայրում | Հ | միանավ փոքր ավերված սրահ է |
| Գերեզմանոց | 13-17 դդ. | | Հ | ավերված |

## *ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | 17-18 դդ. | գյուղի ամ եզրին | Հ | միանավ սրահ, ավերված |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 17-18 դդ. | գյուղի կենտրոնում | Հ | եռանավ բազիլիկ, կանգուն է, ամ-ից կից է նոր շրջանում կառուցված գավիթը |
| Գերեզմանոց | 17-18 դդ. | եկեղեցու շուրջը | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1960 թ. | գյուղի մեջ | Հ | |

## *ՏԱՆՁԱՎԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Ամրոց | մ.թ.ա. 2 հզ վերջ - 1 հզ սկիզբ | գյուղից 2 կմ հս-աե, Մաճ գյուղատեղիի ամ եզրին, բլրի վրա | Հ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի Մաճ | 16-18 դդ. | գյուղից 2 կմ հս-աե, սարալանջին, գոմերի մոտ, Գորիս-Կապան կարճ ճանապարհի վրա | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 16-18 դդ. | | Հ | կա վիշապաքանդակով տապանաքար |
| Եկեղեցի | 17 դ. | | Հ | միանավ սրահ, տանիքն ավերված |
| Գյուղատեղի Տանձավեր | 5-18 դդ. | գյուղից 500 մ հս | Հ | ավերված |
| Գերեզմանոց | միջնադար | գյուղատեղիի ամ մասում, անտառապատ ձորալանջին | Հ | ավերված |
| Եկեղեցի | վաղ միջնադար | գյուղատեղիի ամ մասում, անտառապատ ձորալանջին | Հ | ավերված է, պահպանվել են մնացորդները |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղից 500 մ հս, ընդարձակ բացատում | Հ | ավերված |
| Դամբարանադաշտ | մ.թ.ա. 2-1 հզ | գյուղից 2 կմ հս-աե, Մաճ գյուղատեղիի աե եզրին | Հ | |
| Եկեղեցի | 17-18 դդ. | գյուղապետարանի դիմաց | Հ | պահպանվել են հս պատը և ամ պատի 1/4 մասը |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 1705 թ. | գյուղի ամ եզրին, Քաշունի գետի ափին | Հ | եռանավ բազիլիկ |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1970 թ. | գյուղի աե մասում | Տ | հեղ. Լ. Հակոբյան |

## ՈՒԺԱՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Աղբյուր | 20 դ. | գյուղի մեջ | Տ | |
| Գերեզմանոց | 11-19 դդ. | գյուղի մեջ, եկեղեցուց 300 մ հս-ամ | Հ | |
| Գերեզմանոց | 13-14 դդ. | գյուղից 1 կմ աե, «Հանդին արտ» վայրում | Հ | ավերված |
| Խաչքար | 12-13 դդ. | գերեզմանոցի հվ [illegible] | Հ | եղել է որմնափակ [illegible] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գյուղատեղի | 10-11 դդ. | գյուղից 1 կմ հս, բլրի արևելահայաց լանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-11 դդ. | | Հ | ավերված է, տարածքում նկատելի են հիմնավեր մատուռի հետքեր |
| Գյուղատեղի Վաժունիք | 10-19 դդ. | գյուղից 3 կմ հս, բարձր բլրի հարավահայաց լանջին | Հ | ավերված |
| Գերեզմանոց | 10-19 դդ. | | Հ | |
| Եկեղեցի | 1589 թ. | գերեզմանոցում | Հ | միանավ կիսավեր սրահ |
| Եկեղեցի Սբ. Հովհաննես | 1878 թ. | գյուղի մեջ | Հ | միանավ սրահ |
| Եկեղեցի «Սպիտակ աղբյուրի խաչ» | | գյուղից 1 կմ աե | Հ | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1972 թ. | գյուղի հվ եզրին | Տ | |

## *ՕԽՏԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ*

| **հուշարձան** | **կառուցված** | **վայր, հասցե** | **նշան.** | **հավելյալ նշումներ** |
|---|---|---|---|---|
| Եկեղեցի | 10 դ. | գյուղից 1.5 կմ հվ-ամ, ավերված Հունուտ գյուղատեղիում | Հ | թաղածածկ է, կանգուն |
| Եկեղեցի «Քամու խաչ» | 10 դ. | գյուղից 2 կմ հս, «Դուքան բազար» վայրում | Հ | փոքր է, կանգուն |

# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

## ՏԱՐԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

### ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Մ 1:25 000



## IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

4.1. Համայնքի տարածքում նոր շենքերի կառուցման ժամանակ խրախուսվում են հայկական դասական, հայկական մոդեռն և համաշխարհային ժամանակակից ճարտարապետական ոճի կիրառումը:

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջ– հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 15 մ-ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջ–՝ 20 մ-ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի - բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջ–՝ 15 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի - լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:



Շենքերի տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողաճակատներով դեպի վերջիններս:

### 1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

Նոր կառուցվող շենքերի և շինությունների նախագծման ժամանակ շենքերի մասշտաբը համապատասխանեցնել միջավայրի հետ:

Պատուհանների, դռների, ինչպես նաև շքամուտքերի բացվածքներում ողջունվում է հայկական զարդաքանդակներով դեկորատիվ տարրերի կիրառումը:

Ելնելով բնակլիմայական պայմաններից և բազմամյա փորձից՝ նպատակահարմար է լանջավոր տանիքների օգտագործումը (քառալանջ): Ողջունվում է բազմաֆունկցիոնալ, կանաչ տանիքների իրականացումը՝ խստությամբ պահպանելով կառուցման նորմատեխնիկական պահանջները:




- Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը պետք է ընդունել - 0.5:




- Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:




Շվաքարանների կառուցման ժամանակ հաշվի առնել միջավայրի ճարտարապետության հետ համատեղելիությունը, համաձայն աշխատանքային նախագծի և խստորեն պահպանելով ինսոլյացիայի նորմաները:




Շենքերի արտաքին երեսպատումն իրականացնելիս անհրաժեշտ է համապատասխանեցնել միջավայրի ճարտարապետական տեսքին՝ օգտագործելով տեղանքին բնորոշ բնական երեսպատման նյութեր՝ տուֆ, բազալտ, ֆելզիտ, մարմար,

ճարտարապետական ձևերից կարելի է կիրառել արհեստական երեսպատման նյութեր՝ երանգավորումը համապատասխանեցնելով միջավայրին: Արտաքին լուսավորություն իրականացնել միայն հասարակական, մշակութային և վարչական շենքերի ճակատներում և շրջակայքում: Հատուկ դեպքերում նաև բնակելի շենքերում, բնակիչների համաձայնությամբ և պահպանելով լուսավորության նորմանները:

## 2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

Համայնքի տարածքում ճանապարհային ծածկույթը իրականացնել ասֆալտբետոնից, առանձին դեպքերում հնարավոր է ծածկույթի իրականացումը բնական քարերով և երկաթբետոնե ծածկով:

IIIՎՆրդ կարգի ճանապարհի երկու կողմից պահպանել չկառուցապատվող կանաչապատ շերտ՝ 12 մ լայնությամբ, սանպահպանման – կողային տեսանելիությունն ապահովելու համար՝ պարտադիր կանաչապատման պայմանով (ՅՅՇՆ IV-11.05.02-99, 5-11 կետ):



Խաչմերուկներում պահպանել տեսանելիության եռանկյունները, ապահովելով շրջադարձի նվազագույն շառավղերը եզրաքարի եզրով 5 մ-ից ոչ պակաս, հրապարակներում՝ 8մ-ից ոչ պակաս: Յեռավորությունները շենքերից – շինություններից ընդունել հՇՌկ II-60-75** կետ 10.20-ի համաձայն:





Ավտոտնակների համար հատկացվող հողամասի նվազագույն մակերեսը՝ 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:




Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի – առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ

կազմակերպման դեպքում ապահովել՝

- համաքաղաքային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար նվազագույնը 2.25-3.0 մ լայնություն,
- շրջանային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար 1.5 մ լայնություն:

Խաչմերուկ մտնող փողոցների բեռնվածության մակարդակը 0.4-0.8 հասնելու դպքում երթ-եկությունը կարգավորել լուսակիրների միջոցով (տեղադրումը՝ գործող նորմերին համապատասխան):

Փողոցների երկայնական թեքություններն ընդունվում են՝ կախված հաշվարկային արագություններից.




Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով՝ թեթ- կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ, կահավորված լինեն նստարաններով և արհեստական լուսավորությամբ:

Առավելագույն չափերը՝

- երկարությունը ՝ 3.6 մ
- լայնությունը ՝ 2.0 մ

Կանգառներում հնարավորության դեպքում պետք է իրականացնել արգելակման գոտիներ: Պարտադիր են համապատասխան նշագծումները և երթևեկության նշանները:

Ցանկացած ճարտարապետական կառուցապատման կամ հուշարձանների վերականգնման ժամանակ անհրաժեշտ է ընդունել որոշումներ՝ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով՝ ապահովելով վերջիններիս կենսագործունեության լիարժեք պայմաններ:

Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհափողոցային ցանցը, պետք է նախատեսվեն ազգաբնակչության վերոնշյալ խմբերի համար երթուղիների ապահովմամբ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձ-ավորմամբ:

Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հնարավորության դեպքում հաշվի առնել երկայնական ուղղությամբ 5 %-ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելիեֆային պայմանների դեպքում՝ մինչ- 10 % թեքությամբ, սակայն, ապահովելով հորիզոնական տեղամասեր 12 մ ընդմիջումներով:

Ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, աստիճանների - պանդուսների, շենքերի շքամուտքերի, վերելակների, սպորտային կառույցների կազմակերպման ժամանակ առաջնորդվել Թիծ 62-91 ԾՏրՍԶՈ 1994 պահանջներով: Ճանապարհային ցանցին հարող պարիսպների և ցանկապատերի կառուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ճանապարհի կողնակների նորմավորված չափերը: Հենապատերի և ցանկապատերի երեսպատումը իրականացնել տեղանքի ճարտարապետական միջավայրին համահունչ:

## 3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

Զբոսայգիները և հետիոտն ուղիները անհրաժեշտ է նախատեսել հետիոտնի մասսայական հոսքուղու ուղղությամբ: Զբոսայգու տեղադրությունը, երկարությունը և լայնությունը, ինչպես նաև փողոցի լայնական պրոֆիլում անհրաժեշտ է որոշել հաշվի առնելով փողոցի ճարտարապետահատակագծային լուծումները և նրա կառուցապատումները: Զբոսայգիներում և հետիոտն ուղիներում անհրաժեշտ է

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները պետք է լինեն բարեկարգված և կահավորված փոքր ճարտարապետական ձևերով՝ շատրվաններով և ջրավազաններով, աստիճաններով, թեքահարթակներով, հենապատերով, շվաքարաններով, լուսարձակներով և այլն: Լուսարձակների քանակությունը որոշվում է տարածքի լուսավորության նորմաներով:

Լանդշաֆտա-ռեկրացիոն գոտիներում ճանապարհային ցանցի ուղեգծումը անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս փոքր թեքություններով հետիոտնի տեղաշարժի հիմնական ուղղությանը համապատասխան և հաշվի առնելով սպորտ հրապարակների և խաղահրապարակների ամենափոքր հեռավորությունը: Քայլուղու լայնությունը պետք է 0.75 մետրի պատիկ լինի (մեկ մարդու երթևեկության գոտու լայնությունը):

Լանդշաֆտա- ռեկրացիոն գոտիներում ճանապարհ-արահետային ցանցի մակերևույթի ծածկույթը անհրաժեշտ է իրականացնել սալիկներով, խճով և ուրիշ ամուր հանքային նյութերով՝ թույլ տալով ասֆալտբետոնե ծածկույթի օգտագործումը հատուկ դեպքերում:

Շենքերից, շինություններից, ինչպես նաև ինժիներական օբեկտներից ծառերի և թփուտների միջև հեռավորությունը անհրաժեշտ է պահպանել համաձայն աղյուսակի.

| Շենք, շինություն և ինժիներական օբյեկտներ | Հեռավորությունը(մետր) շենքից, շինությունից և ինժ. օբեկտներից մինչև | |
|---|---|---|
| | Ծառի բունը | Թփուտներ |
| Շենքի և շինության արտաքի պատ | 5 | 1,5 |
| Մայթեզր | 0,7 | 0,5 |
| Փողոցի երթևեկելի մասի եզրը, ճանապարհի ամրացված կողնակի կամ ջրհավաք առվի եզրը | 2 | 1 |
| Լուսավորության ցանցի հենասյուներ, կամրջային հենարան, էստակադ | 4 | - |
| Շեպի, պատշգամբի ստորոտ | 1 | 0,5 |
| Հենապատի ստորոտ | 3 | 1 |
| Ստորգետնյա ցանցեր | | |
| Գազամուղ, կոյուղի | 1,5 | - |
| Ջեռուցման ցանց | 2 | 1 |
| Ջրամատակարարման խողովակ, դրենաժ | 2 | - |
| Հոսանքի մալուխ և կապի մալուխ | 2 | 0,7 |

Ծանոթություն. Աղյուսակում ներկայացված ցուցանիշները վերաբերվում են ծառերին՝ որոնց սաղարթի տրամագիծը չի գերազանցում 5 մետրը և պետք է ավելացվեն ավելի մեծ սաղարթի տրամագիծ ունեցող ծառերի համար:

*Աշխատակազմի ղեկավար՝* *Նելլի Շահնազարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 22-Ն**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 38)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 37-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

1. Հաստատել տեղական ինքնակառավարմանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 20-ի «Տեղական ինքնակառավարմանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշումը:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. <u>մարտի 29</u>*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 22-Ն որոշման

# Կ Ա Ր Գ
# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակներում և նրանց գործունեության բնագավառներում:

2. Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով՝

1) բնակիչները տեղեկացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին.

2) բնակիչներն ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենալու համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից ընդունվող որոշումների վրա.

3) կազմակերպվելու են տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես՝ համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների նախագծերի հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունները ընդունվելու և ներկայացվելու են նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին.

4) կազմվելու, քննարկվելու և իրականացվելու են համայնքի կառավարմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր.

5) կազմակերպվելու են և անց են կացվելու հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ մինչև համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, այդ մասին նախապես՝ առնվազն 15 օր առաջ, նյութերը հրապարակելով ինտերնետային կայքում, հեռահաղորդակցության միջոցներով, մամուլով, ԶԼՄ և այլ հնարավոր միջոցներով.

6) բնակիչները իրազեկվելու և (կամ) ներգրավվելու են համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

3. Համայնքի բնակիչներից ավագանու նիստում քննարկելու համար օրենքով նախատեսված կարգով ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները ենթակա են ավագանու նիստում քննարկման:

4. Համայնքի բնակիչ հանդիսացող անձը տեղական ինքնակառավարմանը կարող է մասնակցել անհատապես կամ ընդգրկվելով որևէ աշխատանքային խմբում կամ խորհրդում, նախապես այդ մասին գրավոր դիմելով համայնքի ղեկավարին կամ համայնքի ավագանուն, ինչպես նաև վերջիններիս կողմից որևէ հարցի քննարկման համար հրավեր ստանալու դեպքում:

5. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքում հաշվառված տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր անձ:

6. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ համայնքի բնակիչների ոչ պակաս քան մեկ տոկոսը:

7. Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում համայնքի ղեկավարին:

8. Համայնքի բնակիչների գրավոր նախաձեռնությունը ներկայացվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում այն ուսումնասիրվում է համայնքապետարանի աշխատակազմում:

9. Համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող հարցի վերաբերյալ հարցի հեղինակը (բնակիչների ներկայացուցիչը) ավագանու որոշման նախագիծը և դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումն ու որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ այն ավագանու օրակարգ ներառելու համար, որն էլ քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում ավագանու կանոնակարգին համապատասխան:

10.Նույն նախաձեռնությունն ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով քննարկվել՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո ըստ սույն կարգով սահմանված հաջորդականության, համաձայն ավագանու կանոնակարգի:

11. Համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող հարցերի հեղինակ հանդիսացող նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցչին ավագանու որոշման նախագծի, դրա հիմնավորման և որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները կազմելուն աջակցելու համար աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակից են դառնում աշխատակազմի համապատասխան մասնագետները:

12.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին զանգվածային լրատվամիջոցներով, համայնքի ինտերնետային կայքով կամ այլ տեղեկատվական միջոցներով իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Ն. Շահնազարյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
### ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
### ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 74-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը, համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշումը:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՓԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու

2019 թվականի մարտի 29-ի թիվ 23-Ն որոշման

**ԿԱՐԳ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ և ԳԱՆՁՄԱՆ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Կապան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Կապան համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

## II. Աղբահանության վճար վճարողների և նրանց շարժի հաշվառումը

4. Կապան համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

5. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը համայնքի ավագանու կողմից վերապահվել է «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ին, որը հաշվետու ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը, պարտավոր է Կապան համայնքի ղեկավարին ներկայացնելու տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

6. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

7. Կապան համայնքում աղբահանության վճարների հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափերին համապատասխան:

8. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կապան համայնքի ղեկավարը:

## III. Աղբահանության վճարի հաշվարկը

9. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձանց քանակով,

2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ Կապան համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

10.Աղբահանության վճարի հաշվարկման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կապան համայնքի ղեկավարը:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

11. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում են Կապան համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված կազմակերպության կողմից (այսուհետ՝ Գանձող):

12.Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային համակարգի միջոցով փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան:

13.Կապան համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

14.Աղբահանության վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կապանհամայնքի ղեկավարը:

## V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15.Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

## VI. Այլ դրույթներ

16.Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Կապան համայնքի ղեկավարի կողմից:

**Աշխատակազմի քարտուղար՝**      **Ն. Շահնազարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ N 24-Ն

### 29 ՄԱՐՏԻ 2019թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը, համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Կապան քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքում հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշումը:

3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 11 )**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՄԻՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*

*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2019 թվականի մարտի 29-ի թիվ 24-Ն որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## I. ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպումը տեղական ինքնակառավարմանն առնչվող իրավական ակտերի նախագծերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքման աշխատանքների իրականացման գործընթացն է:

2. Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման հիմնական նպատակներն են՝ քննարկման դրված կարևորագույն նշանակության հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտումը, այլընտրանքային տարբերակների, ինչպես նաև հնարավոր ծախսերի, օգուտների և հավանական ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների ստացումը և իրավաստեղծ աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովումը:

3. Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման սկզբունքներն են՝ հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը:

4. Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպմանը կարող են մասնակցել շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

5. Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպումը և իրականացումը ֆինանսավորվում է տվյալ տարվա Կապան համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6. Հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման իրականացման ժամկետն առնվազն 15 օր է, Կապան համայնքի ղեկավարի որոշմամբ առավել երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:

## II. ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Կապանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է հանրային բաց լսումների և քննարկումների հրավեր, որը պետք է պարունակի դրանց իրականացման տեսակի, վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ: Ընդ որում, դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել, քան հանրային բաց լսումների և քննարկումների հրավերի հրապարակման պահից տասը օրը:

8. Հանրային բաց լսումներ և քննարկումներ իրականացնելու նպատակով դրա հրավերը հրապարակելու հետ մեկտեղ Կապան համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև Կապան համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված այլ նյութեր:

9. Հանրային բաց լսումների և քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք հրապարակված իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել Կապանի համայնքապետարան: Եթե առաջարկությունները և (կամ) դիտողություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա Կապանի համայնքապետարանն անմիջապես, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է դրանք ստանալու մասին:

10.Հանրային բաց լսումներ իրականացնելու նպատակով հանրային բաց լսումների իրավերը հրապարակվելուց առնվազն տասներկու օր հետո Կապան համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հանրային բաց լսումները և քննարկումները կարող են իրականացվել նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, քննարկումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով: Լսումների անցկացումը պարտադիր է Կապանի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի նախագծերի քննարկման դեպքում: Կապանի համայնքապետարանի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին սկսում է բաց լսումները և քննարկումները, ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը, քննարկման հարցերի շրջանակը և մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր քննարկումների վերաբերյալ, որոնք մինչ այդ հրապարակված չէին եղել նախագիծը մշակող մարմնի համացանցային կայքում: Համայնքապետարանի աշխատակազմից ներկայացուցիչ հանդիսացող լսումների քարտուղարը պետք է կազմի քննարկումների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է իր կողմից: Արձանագրությունում նշվում են քննարկումների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

11. Հանրային բաց լսումները և քննարկումները իրականացնելու դրա հրավերը հրապարակելուց հետո հասարակական հարցումների միջոցով հանրային բաց լսումներ կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր: Տվյալ դեպքերում Կապանի համայնքապետարանի ներկայացուցիչը ներկայացնում է համապատասխան իրավական ակտի նախագծի համառոտ նկարագիրը և հարցման ենթակա հարցերի շրջանակը: Հարցման մասնակիցներն իրենց առաջարկությունները և դիտողությունները ներկայացնում են հարցումն իրականացնողին: Դրանց վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրվում է հարցում կատարողի կողմից, որում ամրագրվում են հարցումների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

Աշխատակազմի քարտուղար Ն. Շահնազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

**ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա**

**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 34/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 0.75774 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 9-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Գործարանային փողոցի թիվ 34/5 հասցեում գտնվող «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր» կատեգորիայի «պահեստարանների» գործառնական նշանակության 0.75774 հա հողամասը /ծածկագիր 09-001-0550-0088/ արտադրական կառուցապատման նպատակով (պահեստարաններ կառուցելու) աճուրդով վաճառել՝ մեկնարկային գին սահմանելով 12275390.0 /տասներկու միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր իննսուն/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*

*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 26-Ա

29 ՄԱՐՏԻ 2019թ.

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Ռ.ՄԻՆԱՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25Բ/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,002 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 9-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 25բ/11 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերից 0.002 հա հողամասը /ծածկագիր 09-001-0384-0032/ բնակելի կառուցապատման նպատակով (ավտոտնակ կառուցելու) աճուրդով վաճառել՝ մեկնարկային գին սահմանելով 32400,0 /երեսուներկու հազար չորս հարյուր/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. <u>մարտի 29</u>*

*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 27-Ա**
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՆՈՐ ՋՈՒՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ, ԹԻՎ 5, 6, 7, 8, 9 ԵՎ 10 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի $48^{1}$-րդ և 60-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի ր) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1269-Ն որոշման և հիմք ընդունելով էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2012 թվականի նոյեմբերի 27-ին տրված ՇԱԹՎ-29/232 (նախկին 14/179) օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, թիվ ԼՎ-232 լեռնահատկացման ակտը և էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի երկարաձգման մասին թիվ 134-Ա հրամանը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Կապան համայնքի վարչական տարածքում՝ Արծվանիկ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր» կատեգորիայի «արդյունաբերական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության ներքոհիշյալ հողամասերը ընդերքօգտագործման նպատակով /որպես պոչամբար/ առանց մրցույթի կառուցապատման իրավունքով մինչև 2041 թվականի մայիսի 30-ը տրամադրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը՝

1) Նոր Ջուր թաղամասի թիվ 5 հասցեում գտնվող 3.9341 հա /ծածկագիր 09-018-0111-0584/ 732930.0 /յոթ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր երեսուն/ դրամ,

2) Նոր Ջուր թաղամասի թիվ 6 հասցեում գտնվող 8.8107 հա /ծածկագիր 09-018-0111-0586/ 1641440.0 /մեկ միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր քառասուն/ դրամ,

3) Նոր Ձոր թաղամասի թիվ 7 հասցեում գտնվող 10.2747 հա /ծածկագիր 09-018-0111-0588/ 1914180.0 /մեկ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար մեկ հարյուր ութսուն/ դրամ,

4) Նոր Ձոր թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող 8.4748 հա /ծածկագիր 09-018-0111-0589/ 1578860.0 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր վաթսուն/ դրամ,

5) Նոր Ձոր թաղամասի թիվ 9 հասցեում գտնվող 4.5151 հա /ծածկագիր 09-018-0111-0582/ 841170.0 /ութ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր յոթանասուն/ դրամ ,

6) Նոր Ձոր թաղամասի թիվ 10 հասցեում գտնվող 1.9866 հա /ծածկագիր 09-018-0111-0587/ 370110.0 /երեք հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր տասը/ դրամ տարեկան վարձավճարով:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԶԱՎԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. <u>մարտի 29</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 28-Ա
29 ՄԱՐՏԻ 2019թ.

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 154/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ 0,00221 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, ***համայնքի ավագանին   ո ր ո շ ու մ  է.***

1.Կապան  համայնքի վարչական սահմաններում, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 154/1 հասցեում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացու  սեփականություն փոխանցված 0,00221 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՛**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ  ԱՐԹՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ N 29-Ա
**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՎԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ՝ «ՆՐԲԱՆՑՔՆԵՐԸ» «ԹԱՂԱՄԱՍԵՐԻ» ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման, հիմք ընդունելով Սևաքար համայնքում իրականացված անշարժ գույքի համարակալման ցանկը և հաստատված սխեման /բնակավայրի կադաստրային քարտեզը/ և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության կողմ, __ դեմ, __ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

1. Վերահասցեավորել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սևաքար գյուղի ներբնակավայրային օբյեկտները՝ «նրբանցքները» անվանափոխելով «թաղամասերի»:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ... ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. <u>մարտի 29</u>*
*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 30-Ա

**29 ՄԱՐՏԻ 2019թ.**

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ՍԵՆՅԱԿԸ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ 15.1 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ 21)-րդ կետով, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի «Համայնքի սեփականություն համարվող գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու վարձավճարների չափերը հաստատելու մասին» թիվ 7-Ն որոշմամբ, հաշվի առնելով Արմեն Մկրտչյանի դիմումը և համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 8/43 հասցեում գտնվող գրադարանի թիվ 2 սենյակը՝ ընդհանուր 15.1 քառ.մ մակերեսով հասարակական նշանակության ոչ բնակելի տարածքը հինգ տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 8 շենքի, թիվ 11 բնակարանի բնակիչ Արմեն Մկրտչյանին, սահմանելով 9060 /ինը հազար վաթսուն/ ՀՀ դրամ ամսական վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 11 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2019թ. մարտի 29*
*ք. Կապան*